ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԸ ՀԱՆԴԻՍԱՊԵՏԵՑ ՈՏՆԱԼՎԱՅԻ ԱՐԱՐՈՂՈՒԹՅՈՒՆԸ

Մարտի 20-ին Ավագ Հինգշաբթի օրը, Միածնաէջ Մայր Տաճարում հավարտ առավոտյան ժամերգության կատարվեց ապաշխարության կարգ, ապա սկսվեց Ս. Պատարագը՝ ի հիշատակ մեր Տեր Հիսուս Քրիստոսի վերջին ընթրիքի և Սուրբ Հաղորդության խորհրդի հաստատման: Պատարագիչն էր Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի միաբան Տ. Դանիել վարդապետ Թումանյանը:

Հետմիջօրեին ձեռամբ Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք և Ամենայն Հայոց Կաթողիկոսի կատարվեց Ոտնլվայի արարողությունը: Սուրբգրային ընթերցումներից և օրվա խորհրդին նվիրված շարականների երգեցողությունից հետո Վեհափառ Հայրապետն օրհնեց յուղը, որն արարողությունից հետո բաշխվեց հավատացյալներին:

Այնուհետև, Հիսուս Քրիստոսի օրինակով, Ամենայն Հայոց Կաթողիկոսը լվաց և յուղով օծեց հոգևորականների և զինվորների ոտքերը: Հայաստանի այլ եկեղեցիներում ևս բազմաթիվ զինվորականներ մասնակցեցին Ոտնլվայի արարողությանը:

Երեկոյան մինչև ուշ գիշեր կատարվեց Խավարման կարգը, որը հիշատակն է Փրկչի չարչարանքների և խաչելության:

ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

ՈՍՏԵՐԻ ՕՐՕՆԻՒՔՅՈՒՆ ԾԱՂԿԱՀԱՐԱՆ ՏՈՆԻՆ ՁԵՌՔՈՎ ՎԵՆՓՈՒՆ ՀԱՅՐԱՊԵՏԻՆ

ՄԱՆՈՒԿՆԵՐԻ ՕՐՈՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՄԱՆԿԱԿԱՆ ԿԱՎՃԱՆԿԱՐՆԵՐԻ ՄՐՑՈՒՅԹ

ՈՏՆԼՎԱՅԻ ԵՎ ՑՈՒՐԻ ՕՐՇՆՈՒԹՅԱՆ ԱՐԱՐՈՂՈՒԹՅԱՆ ԸՆԹԱՑՔՈՒՄ